**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ 22.07.2022թ. ԿՆՔՎԱԾ N ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-ՕՐ-22/01**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան

«11» օգոստոսի 2022թ.

ՀՀ արդարադատության նախարարությունն, ի դեմս գլխավոր քարտուղար Սիրվարդ Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Մարիոթ Ծաղկաձոր հյուրանոցային համալիրը, ի դեմս տնօրեն Ոսկան Կոկանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր», հիմք ընդունելով կողմերի միջև 22.07.2022թ. կնքված N ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-ՕՐ-22/01 պայմանագրի 7.5 կետը, (այսուհետև՝ Պայմանագիր) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան**

Կողմերը համաձայնեցին.

1.1 Պայմանագրի ընդհանուր գինը ավելացնել 992 000 (ինը հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամով, և սահմանել 3 632 000 (երեք միլիոն վեց հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Պայմանագրի Հավելված N1 հանդիսացող Տեխնիկական բնութագիր - Գնման ժամանակացույցը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված N1-ի:

1.3 Պայմանագրի Հավելված N2 հանդիսացող վճարման ժամանակացույցը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված N2-ի:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից.

2.2 Սույն համաձայնագրում չնշված, Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1, N 2 հավելվածները հանդիսանում են համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ արդարադատության նախարարություն | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Մարիոթ Ծաղկաձոր հյուրանոցային համալիր |
| ՀՀ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 | ք. Ծաղկաձոր, Տանձաղբյուր 2,4/1 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | Արդշինբանկ |
| Հ/Հ՝ 900011040350 | Հ/Հ 2480100079580040 |
| ՀՎՀՀ՝ 02506264 | ՀՎՀՀ՝ 00046317 |
| Ս. Գևորգյան | Ո. Կոկանյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված N 1
«11» օգոստոս 2022թ. կնքված N 1 Համաձայնագրի
22.07.2022թ. կնքված ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-ՕՐ-22/01
ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| համարը | ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանում | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | | հասցեն | Ժամկետը |
| 1 | 79111200/3 | Ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ | Ներկայացված է ստորև | դրամ | 3 632 000 | 1 | ՀՀ, ք. Ծաղկաձոր, Տանձաղբյուր 2,4/1 | 2022 թվականի օգոստոսի 13-ից 14-ը |

2022 թվականի օգոստոսի 13-14-ը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Մարիոթ Ծաղկաձոր հյուրանոցային համալիրում կայանալիք «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի կողմից կազմակերպված կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքային քննարկման նպատակով 60 անձի համար տրամադրել 1-օրյա գիշերակաց, նախաճաշ, 1-անգամյա սուրճ, որը ներառում է 2 տեսակի մինի թխվածք, միրգ, ջուր, զովացուցիչ ըմպելիք, սուրճ, թեյ, և 1-անգամյա ընթրիք, որը ներառում է.

- սառը ուտեստ՝ պանրի տեսականի, մսի տեսականի, քամած մածուն, թթու բանջարեղեն, հացի տեսականի,
- աղցան՝ աղցան-բար համեմունքներով, սմբուկով և նաշարաբով աղցան, տավարի մսով թայ աղցան,
- տաք ուտեստ՝ իշխանի ֆիլե, բանջարեղեն ասիական ոճով, հավի կրծքամիս հատապտղային սոուսով, բրինձ՝ եգիպտացորենով,
- դեսերտ՝ սեզոնային մրգեր, 1 տեսակի խմորեղեն,
- գազավորված և աղբյուրի ջուր, զովացուցիչ ըմպելիք, սուրճ և թեյի տեսականի

1 օրով տրամադրվում է քննարկումների սենյակ (ներառյալ՝ պրոյեկտոր, էկրան, նոթատետր, գրիչ, ջուր, 1 անլար բարձրախոս):

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011040350
ՀՎՀՀ՝ 02506264

________________ Ա. Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Մարիոթ
Ծաղկաձոր հյուրանոցային համալիր
ք. Ծաղկաձոր, Տանձաղբյուր 2,4/1
Արդշինբանկ
Հ/Հ 2480100079580040
ՀՎՀՀ՝ 00046317

------------------------- Ո. Կոկանյան
/ստորագրություն/

Հավելված N 2
«11» օգոստոս 2022թ. կնքված N 1 Համաձայնագրի
22.07.2022թ. կնքված ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-ՕՐ-22/01
ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չափա-բաժնի համա-րը | գնումների պլանով նախատես-ված միջանցիկ ծածկագիր ը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 79111200/3 | Ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ | - | - | - | - | - | - | - | 3 632 000 | 3 632 000 | 3 632 000 | 3 632 000 | 3 632 000 | 3 632 000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011040350
ՀՎՀՀ՝ 02506264

Ս. Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Մարիոթ
Ծաղկաձոր հյուրանոցային համալիր
ք. Ծաղկաձոր, Տանձաղբյուր 2,4/1
Արդշինբանկ
Հ/Հ 2480100079580040
ՀՎՀՀ՝ 00046317

----------------------------- Ռ. Կոկանյան
/ստորագրություն/
Կ.Տ